

Խ Ռ Ր Հ Ր Դ Ա Ի Ո Ր Տ Ե Ս Ի Լ

Երբ մի օր նստած՝ ես կերպազէի աշխարհիս ունայն փառքերի վրայ,
 Հիփոթուած մտքով կը թափառէի, 'ի քուն ընկղմած մի երազ տեսայ:
 Տեսայ մարդիկներ 'ի խոր քուն թմրած, անկարգ անսահման իրարի վերայ:
 Սոսկալի իաւար զիրենք պաշարած, ոչ Արև, Լուսին, և ոչ լոյս տեսայ:
 Տեսայ երկնքից մի լոյս ծագեցաւ, թմրած մարդիկներ վերկացան տեղից:
 Աղջամուղջ խաւար շուտ փարատեցաւ, տխուր տեսարան վանեցաւ լուանից:
 Հեռուից մի մեծ ջահ էր երևում, որոյ անաղօտ լուսից զօրացան,
 'նոր ոգի առած թմրած տեղերում, ելան որ գնան՝ տարակուսեցան:
 Չիմացան 'ի նշպէս՝ դէպ ո՞ր ընթանալ, զի երկու երկար ճանապարհ տեսին:
 Բաւական միջոց սկսան խոկալ, ուստի շուարած մի տեղ կանգ առին:
 Յանկարծ հնչեցաւ մի քաղցրիկ բարբառ, թէ «այս է նեղ դուռն ճանապարհ անձուկ:
 Որ տանի 'ի կեանս անպատում՝ անձառ, եկայք անյապաղ առ իս մատերուք»:
 Կրկնեցաւ դարձեալ մի ուրիշ պատգամ, «լայն է ճանապարհ և դուռն ընդարձակ:
 Որ տանի կորուստ մշտնջենական, արդ ո՞վ կամիցի մտցէ՛ համարձակ»:
 Զի նեղ ճանապարհն էր շատ դժուարին, քարուտ և փշոտ սար ու ձորերից:
 Համբերող անձինք գնալ յանձն առին, զրկուած աշխարհի ունայն փառքեօտ:
 'նորա ընտրեցին այն նեղ ճանապարհ, ուր էր նեղութիւնք և խիստ տառապանք:
 Յանձն առին յօժար մինչ 'ի մահ, իսպառ մերժեցին աշխարհի սուտ փառք:
 Իսկ լայն ճանապարհն էր նախանձելի, հոտաւէտ ծաղկունք յաջ յահակ լուսեալ:
 Հեշտասէր մարդկանց էր շատ հաճելի, ոմանք պատրաստուած ընտրեցին գնալ:
 Տեսան զուարճութիւն լայն ճանապարհին, հեշտալի խրախճանք բերկրանաց հրճուանք:
 Սրտազրաւ զիմաց սիրուհեաց սեռին, հոտաւէտ բուրմունք ծաղկանց բուրաստանք:
 Երկճանապարհաց միջին կայր խրամ, մարդակուլ անդունդ՝ վիհ մեծ կենսազրաւ:
 Մի քանի տեղ կայր կամուրջ պնդակալով, անց ու դարձ մարդկանց ինքնիշխան կամաւ:
 Հուսկ յետոյ տեսայ վառելիք ջահեր, մեծ ջահի լուսից փառաւոր անձինք,
 Առաջնորդեցին մարդկանց անվհեր, որոնք ունէին յուս բարձած բռնիք:
 Շարժեցան ամէնքը տեղից վեր կացած, սկսան գնալ ջահերի լուսով:
 Ոմանք ընթացան նեղ ղոնից մտած, ոմանք գնացին լայն ճանապարհով:
 'նեղ անձուկ դոնից որոնք որ մտան՝ սիրով յանձն առին շարունակ գնալ,
 Հասին վերջապէս 'ի վայր հանգստեան, անդ փիճակեցան անվախճան մնալ:
 Լսեցին մի ձայն հրաւիրական, թէ «եկայք առ իս ո՞վ ծանրաբռնիք:
 Եկայք դուք օրհնեալք հօր իմ սիրական, և ժառանգեցէք սուրբ փառաց տեղիք»:
 Որոնք ընդարձակ դոնից անցկացան, լայն ճանապարհի հեշտութեանց խաբուած,
 Ի կորուստ անվերջ յաւիտենական, մատնեցան 'ի հուր իսկ դատապարտուած:
 Զի գոռաց իսկոյն ձայն զարհուրական, թէ «երթայք յինէն յիմար անիծեալք,
 Ի գեհեան 'ի հուրն յաւիտենական, որք այժմ իրաւամբ դուք դատապարտեալք»:
 Այս տեսիլ զիս շատ զարհուրեցրուց, երկիւղիցս իսկոյն զարթնեցայ քնիցս:
 Յեսայ յիշեցի այս խօսքը վաղուց, ուրմն ընդունայն է փառք աշխարհիս:

ՄԵՍՐՈՊ ԲԼԱՆՆԵՍ ՓԼՓԸԶԵՆՆՅՑ,